

**ՔԱՂՎԱԾՔ**  
**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**  
**Կ Ա Ր Գ Ի Ց**

\*\*\*\*\*

**Ճ. ՀԵՌԱՎԱՐ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Հեռավար վերապատրաստում կարող է իրականացնել ՀՀ փաստաբանների պալատը կամ Փաստաբանական դպրոցը: Փաստաբանական դպրոցի կողմից Հեռավար վերապատրաստման վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, ներկայացվում է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին:

2. Հեռավար վերապատրաստումն իրականացվում է համացանցի միջոցով միաժամանակյա դիտման ռեժիմով: Հեռավար վերապատրաստման յուրաքանչյուր դաս բաղկացած է առնվազն չորս ժամից:

3. Հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝

ա. Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում հաշվառված և գործունեություն ծավալող փաստաբանները.

բ. այլ պետությունում գտնվող փաստաբանները.

գ. տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները՝ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի գրավոր համաձայնությամբ.

դ. սույն կետի ա-գ ենթակետերում չնշված այն փաստաբանները, որոնց համար ՀՀ փաստաբանների պալատը կամ Փաստաբանական դպրոցը հատուկ կազմակերպում է վերապատրաստման դասընթաց հեռավար ձևով:

4. Հեռավար վերապատրաստում անցնող փաստաբանի ներկայությունը տեսախցիկի առջև պարտադիր է:

5. Հեռավար վերապատրաստման դասընթացին կարող են միանալ սահմանափակ թվով փաստաբաններ, որոնք սույն կարգի համաձայն նախապես գրանցվել են դասընթացին մասնակցելու համար և ստացել են մասնակցության թույլտվություն: Դասընթացին հեռավար ձևով մասնակցելու (գրանցվելու) համար փաստաբանը պարտավոր է ոչ ուշ, քան դասընթացը սկսելուց երկու օր առաջ էլեկտրոնային նամակ ուղարկել համապատասխան հայտարարության մեջ նշված էլեկտրոնային հասցեով: Հետադարձ դրական պատասխան ստանալուց հետո, փաստաբանը համարվում է գրանցված դասընթացին:

6. Հեռավար կարգով վերապատրաստում անցնող փաստաբանը պետք է ունենա տեխնիկական բավարար միջոցներ, որոնց մասին ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով համակարգողը էլեկտրոնային նամակով իրազեկում է հեռավար դասընթացին թույլատրված փաստաբանին:

7. Հեռավար վերապատրաստման դասընթացին մասնակցող փաստաբանը պարտավոր է՝ վերապատրաստման դասընթացի ժամանակ բացառել կողմնակի

ծայները (աղմուկը), տեսախցիկը դասընթացի ժամանակ միշտ պահել միացված, տեսախցիկն ուղղել այնպես, որ տեսանելի լինի փաստաբանի դեմքը, տեխնիկական խնդիրների դեպքում անմիջապես հայտնել դասընթացավարին, բարձրախոսը միացնել միայն դասախոսի, լսարանի կամ համապատասխան մասնագետի հետ կապ հաստատելու կամ հարց տալու դեպքում, դասընթացն սկսվելուց 10 րոպե առաջ մուտք գործել ՀՀ փաստաբանների պալատի կամ Փաստաբանական դպրոցի կողմից տրամադրված հեռավար վերապատրաստման համար նախատեսված իր անձնական էջ (Google +): Սույն գլխով սահմանված պարտականությունները կամ պայմանները չկատարելու կամ չպահպանելու դեպքում, փաստաբանի կողմից հեռավար վերապատրաստման դասընթացին մասնակցությունը չի հաշվարկվի որպես պարտադիր վերապատրաստման ժամ: